



ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

ԱՊԱՑՈՒՑԱՇԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կազմակերպիչներ. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (ՄԱԿ ԵՏՀ), ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակ

Թիրախային խումբ. Քաղաքականություն մշակողներ, ազգային, մարզային և քաղաքային գործադիր իշխանությունների ներկայացուցիչներ, վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչներ, քաղաքապետարաններ, քաղաքաշինության պլանավորում իրականացնողներ, կոմունալ և ցանցային օպերատորներ, շենքերի կառավարման ընկերություններ, ճարտարապետներ, ճարտարագետներ, հետազոտողներ:

Նախապատմություն. Էներգետիկ ոլորտի բնականոն գործունեությունը և ցածր արտանետումների ցուցանիշները հանդիսանում են կայուն զարգացման գրավական: Էներգաարդյունավետությունը ծախսերի նվազեցման, մրցունակության բարելավման, էներգիայի մատակարարման անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության միջոց է: Շենքերը համատարած էներգաարդյունավետ դարձնելու համար պահանջվում է համապատասխան օրենսդրության մշակում, ինչպես նաև բնակարանային ֆոնդում դրական արդյունքների ներդրմանն օժանդակելու ուղղությամբ տեղական նախաձեռնությունների իրականացում:

Քարձորակ տվյալների հասանելիությունը, ընդհանուր ցուցանիշների մշակումը և օգտագործումը կարող են օժանդակել շահագրգիռ կողմերի իրազեկված որոշումների կայացման և համագործակցության գործընթացներում: Էներգաարդյունավետ շենքերին վերաբերող տվյալները ներառում են.

- Շենքերի շինարարական բնութագրերը (շինարարության և վերանորոգման տարիին, ընդհանուր տարածքի մակերեսը, բնակարանների քանակը).
- Բնակիչների վերաբերյալ տվյալները (բնակիչների քանակը, շենքի նշանակությունը՝ ներգրավվածությունը գործարար կյանքում՝ ըստ տնտեսական գործունեության ուղղությունների, վարձակալ/սեփականատեր հարաբերակցությունը)
- Շենքի հետ անմիջականորեն չառնչվող ընդհանուր քաղաքաշինական տվյալներ՝ (թաղամասի ջեռուցման և հովացման ենթակառուցվածքները, քաղաքաշինական ծրագրերը):

Շատ վայրերում էներգաարդյունավետությանը վերաբերող անհրաժեշտ տվյալներն արդեն իսկ հավաքագրվում են տարբեր հաստատությունների (հիմնականում՝ պետական գերատեսչությունների) կողմից: Այնուամենայնիվ, կան բազմաթիվ խոչընդոտներ, որոնք դեռևս թույլ չեն տալիս ապահովել տվյալների արդյունավետ օգտագործումը.

- Շատ տվյալներ դեռևս ներառված չեն տվյալների շտեմարաններում (ներկայումս՝ պահվում են թղթային կրիչներով և excel աղյուսակների տեսքով),
- Տվյալների վարման եղանակները ստանդարտացված չեն, մետատվյալները բացակայում են.
- Պետական գերատեսչությունների միջև տվյալների փոխանակման առումով համագործակցությունը բացակայում է կամ բավարար չէ,
- Բացակայում են, կամ բավարար զարգացած չեն տվյալների արդյունավետ և անվտանգ հասանելիություն ապահովող անհրաժեշտ ենթակառուցվածքները
- տվյալների օգտագործումը սահմանող իրավական հիմքերը դեռևս մշակված չեն:

Այդուհանդերձ, որոշ վայրերում արդեն իսկ մշակվել են առկա խոչընդոտները հաղթահարելու և շահագրգիռ կողմերի համար մատչելի տվյալների հասանելիության ուղղությամբ իրավական, տեխնիկական և կազմակերպչական լուծումներ:

ՕՐԱԿԱՐԳ

12 մայիսի 2020թ.

Աշխատաժողովը կանցկացվի առցանց (WEBEX հարթակով):

Ժամը	Թեմա	Ներկայացնող
10:45-11:00	Մասնակիցների միացում WebEx-ին, կապի որակի ստուգում	Որոշվում է
11:00-11:10	Աշխատաժողովի բացում	Օլեգ Ձյուբինսկի, ՄԱԿ ԵՏՀ տարածաշրջանային խորհրդատու
11:10-11:40	<p>Տվյալների լուծումների ներկայացում ապացուցահեն քաղաքականության և շահագրգիռ կողմերի համագործակցության համար.</p> <ul style="list-style-type: none"> - Տվյալների լուծումների սահմանումը և էներգաարդյունավետությանը վերաբերող առումով դրանց արդիականությունը - էներգաարդյունավետությանը վերաբերող նախաձեռնությունների ընդհանուր ակնարկ - Իրավիճակային ուսումնասիրություն շենքերում էներգաարդյունավետության առնչվող տվյալների լուծումների վերաբերյալ - Հայաստանին առնչվող միջազգային փորձի ամփոփ ներկայացում - Հարցեր և պատասխաններ 	Ալիսա Ֆրեյեր, Տվյալների թվային լուծումների փորձագետ
11:40-12:00	Շենքերի էներգաարդյունավետությանն առնչվող տեղական օրենսդրության և քաղաքականության թիրախների նկարագիր	Տիգրան Սեկոյան, ՄԱԶԾ-ԿԿՀ Ծրագրի էներգետիկայի և էներգաարդյունավետության ավագ փորձագետ
12:00-12:30	Շենքերի էներգաարդյունավետության խթանման ուղղությամբ պետական, մարզային և տեղական ինքնակառավարման մակարդակներում առկա նախաձեռնությունների նկարագիր	ՀՀ քաղաքաշինության կոմիտե, որոշվում է
12:30-13:00	Ներկայիս իրավիճակը տվյալների հավաքագրման և հասանելիության առումով	ՀՀ կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ
13:00-13:30	Ընդմիջում	
13:30-14:15	<p>Ապացուցահեն քաղաքականության և շահագրգիռ կողմերի համագործակցության համար տվյալների լուծումների հիմնական տարրերի ակնարկ</p> <ul style="list-style-type: none"> - վերլուծության շրջանակ - Շահագրգիռ կողմերի նպատակները և տվյալների լուծումների նախաձեռնության նպատակները - Տվյալների լուծումների կառուցվածքային տարրերի իմիտացիա - Տվյալների լուծումների արդյունքային ներկայացում - Ամփոփում - Հարցեր և պատասխաններ 	Ալիսա Ֆրեյեր, Տվյալների թվային լուծումների փորձագետ

14:15-14:45	<p>Վարժություն.</p> <ul style="list-style-type: none"> - Հայաստանում արդեն առկա հիմնական տարրերի վերլուծություն - Բացերի և առկա խոչընդոտների բացահայտում - Քննարկում հնարավոր լուծումների և հաջորդ քայլերի վերաբերյալ 	<p>Ալիսա Ֆրեյեր, Տվյալների թվային լուծումների փորձագետ</p> <p>Բաց քննարկում բոլոր մասնակիցների հետ</p>
14:45-15:00	<p>Միջոցառման ամփոփում՝</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատաժողովի արդյունքներ - Փակման խոսք 	<p>Օլեգ Ձյուբինսկի, ՄԱԿ ԵՏՀ տարածաշրջանային խորհրդատու</p> <p>ՀՀ ներկայացուցիչներ</p> <p>Ալիսա Ֆրեյեր, Տվյալների թվային լուծումների փորձագետ</p>

Մանրամասներ ելույթների առաջարկվող բովանդակության վերաբերյալ

Թեմա	Առաջարկվող բովանդակություն
<p>Շենքերի էներգաարդյունավետության առնչվող տեղական օրենսդրության և քաղաքականության թիրախների նկարագիր</p>	<p>Առաջարկվող հարցեր/ելույթների բովանդակություն ՀՀ ներկայացուցիչների համար.</p> <ul style="list-style-type: none"> • Որո՞նք են շենքերի էներգասպառման, շինարարության և բնակարանային ֆոնդի կառավարման, քաղաքաշինական և ենթակառուցվածքների պլանավորման ուղղությամբ քաղաքականության մշակման առանցքային մարմինները: • Ո՞ր օրենսդրությունն է (ներկայիս և մշակման փուլում) Հայաստանում անդրադառնում հետևյալ հարցերին. <ul style="list-style-type: none"> ○ Շենքերի էներգաարդյունավետությունը (կա՞ն արդյոք սահմանված քաղաքականության թիրախներ) ○ Շենքերի էներգետիկ վիճակագրություն ○ Շենքերի էներգասպառման, շինարարության և բնակարանային ֆոնդի կառավարման, քաղաքաշինական և ենթակառուցվածքների պլանավորման վերաբերյալ տվյալների հավաքագրում և օգտագործում: • Ինչպիսի՞ն է շենքերի էներգասպառման, շինարարության և բնակարանային ֆոնդի կառավարման, քաղաքաշինական և ենթակառուցվածքների պլանավորման քաղաքականության մշակման համար անհրաժեշտ տվյալների տրամադրման ներկայիս իրավիճակը և ցանկալի գործելակերպը: Այդ թվում՝ <ul style="list-style-type: none"> ○ Ո՞ր կազմակերպություններն են տվյալներ և տեղեկատվություն տրամադրում քաղաքականության մշակման գործընթացի կազմակերպման համար ○ Ինչպիսի՞ տվյալներ և տեղեկատվություն է տրամադրվում ○ Որո՞նք են քաղաքականության մշակման գործընթացի կազմակերպման համար տվյալների և տեղեկատվություն ձեռք բերման ուղղությամբ առկա հիմնական մարտահրավերները/խոչընդոտները: • Որո՞նք են տվյալների և տեղեկատվության տեսակները, որոնք կարող են օժանդակել քաղաքականության մշակման գործընթացին (օրինակ՝ ինչպիսի՞ հարցերի կցանկանան պատասխաններ ստանալ քաղաքականության մշակողները): <p>Առաջարկվող ծրագրեր/նախաձեռնություններ, որոնք պետք է ներկայացվեն ՀՀ ներկայացուցիչների կողմից.</p> <ul style="list-style-type: none"> • «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենք • Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիր • Էներգաարդյունավետության 1-ին և 2-րդ ազգային գործողությունների ծրագիր (ԷԱԱԳԾ) • «Պետական վիճակագրության մասին» օրենք: <p>ՀԸԳՀ (ԵՄ-ի հետ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր) իրականացման գործողությունների պլան:</p>

<p>Շենքերի էներգա-արդյունավետության խթանման ուղղությամբ պետական, մարզային և տեղական ինքնակառավարման մակարդակներում առկա նախաձեռնությունների նկարագիր</p>	<p>Առաջարկվող հարցեր/ելույթների բովանդակություն ՀՀ ներկայացուցիչների համար.</p> <ul style="list-style-type: none"> • Որո՞նք են բնակարանային ֆոնդի կառավարման, էներգետիկ արդյունավետության նախագծերի իրականացման հիմնական պատասխանատուները: • Ինչպիսի՞ (ընթացիկ, նախկին և պլանավորված) նախաձեռնություններ կան Հայաստանում առկա բնակարանային ֆոնդի էներգախնայողության բարելավման ուղղությամբ. <ul style="list-style-type: none"> ○ Միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրեր ○ Ազգային նախաձեռնություններ ○ Գործողություններ, որոնք իրականացվում են քաղաքապետարանների և համայնքապետարանների կողմից • Ինչպիսի՞ն է շենքերում էներգաարդյունավետության նախագծերի իրականացման համար անհրաժեշտ տվյալների տրամադրման ներկայիս իրավիճակը և ցանկալի գործելակերպերը: Այդ թվում՝ <ul style="list-style-type: none"> ○ Ինչպիսի՞ տվյալներ և տեղեկատվություն է անհրաժեշտ նախաձեռնությունների իրականացման (օրինակ՝ թիրախային շենքերը բացահայտելու) համար: Ինչպիսի՞ տվյալներ են ներկայումս հասանելի: Որո՞նք են այլ շահագրգիռ կողմերից տվյալների և տեղեկատվության ստացման ուղղությամբ առկա հիմնական մարտահրավերները/խոչընդոտները ○ Ինչպիսի՞ տվյալներ և տեղեկատվություն է գոյանում էներգախնայողության նախագծերի իրականացման արդյունքում: Արդյո՞ք այն հասանելի է դարձվում այլ շահագրգիռ կողմերի (եթե այո, ի՞նչ եղանակով): Որո՞նք են հիմնական մարտահրավերները/խոչընդոտները այլ շահագրգիռ կողմերի հետ տվյալների և տեղեկատվության փոխանակման առումով: <p>Առաջարկվող ծրագրեր/նախաձեռնություններ, որոնք պետք է ներկայացվեն ՀՀ ներկայացուցիչների կողմից.</p> <ul style="list-style-type: none"> • ՄԱԶԾ-ԿԿԸ Ծրագիր. Շենքերի էներգաարդյունավետության ոլորտում ներդրումների ռիսկի նվազեցում • Հայաստանում Չափողականություն, հաշվետվայնություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի նախագիծ • Համայնքային էներգիայի կառավարման համակարգի (ՀԷԿ) նախագիծ: • Էներգետիկայի կառավարման տեղեկատվական համակարգի (ԷԿՏ) նախագիծ: • Քաղաքներում/համայնքներում էներգախնայողության նախագծերի իրականացման փորձի իրավիճակային ուսումնասիրություններ (Լոռու մարզի Ստեփանավան քաղաք, Երևանի քաղաքապետարան) և այլն:
<p>Ներկայիս իրավիճակը տվյալների հավաքագրման և հասանելիության առումով</p>	<p>Առաջարկվող հարցեր/ելույթների բովանդակություն ՀՀ ներկայացուցիչների համար.</p> <ul style="list-style-type: none"> • Որո՞նք են այն առանցքային մարմինները, որոնք զբաղվում են բնակարանային ֆոնդի, շենքերի էներգասպառման, քաղաքաշինության և ենթակառուցվածքների պլանավորման վերաբերյալ տվյալների հավաքագրմամբ:

	<ul style="list-style-type: none"> • Ի՞նչ տվյալներ են ներկայումս առկա առանձին շենքերի մակարդակում: Ինչպե՞ս են այդ տվյալները հավաքվում: Ինչպիսի՞ աշխարհագրական հղումների համակարգ է օգտագործվում: <ul style="list-style-type: none"> ○ Շենքի բնութագրերը (օրինակ, հասցեները, մակերեսը, հարկերի քանակը, զբաղեցվածությունը/բնակեցվածությունը) ○ սպառվող էներգիայի տեսակը (օրինակ՝ ջեռուցման համար էլեկտրականության, բնական գազի օգտագործում) ○ Բնակիչները (օրինակ՝ բնակարանների քանակը, տնային տնտեսությունների չափը, ընկերությունների տեսակները և աշխատողների քանակը) ○ Քաղաքաշինության և ենթակառուցվածքների պլաններ (օր.՝ նոր շինարարություն) • Որո՞նք են տվյալների տրամադրման ներկայիս և ցանկալի գործելակերպերը: <p>Առաջարկվող ծրագրեր/նախաձեռնություններ, որոնք պետք է ներկայացվեն ՀՀ ներկայացուցիչների կողմից.</p> <ul style="list-style-type: none"> • Կադաստրի կողմից շենքերի վերաբերյալ տվյալների հավաքագրման և մատչելիության վիճակը (http://www.cadastre.am/) • Մանրաձախ էներգիայի մատակարարների կողմից տվյալների հավաքագրման փորձը («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) և այլն:
--	---